ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-550[10]-18.06.2014,21.06.2014-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում.

1. 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) կուտակային բաղադրիչը.

3) կամավոր կենսաթոշակային բաղադրիչը:»,

2. 4-րդ մասի «Պարտադիր կուտակային կենսաթոշակային» բառերը փոխարինել «Կուտակային» բառով, իսկ «պարտադիր կուտակային վճարների» բառերը փոխարինել «կուտակային հատկացումների» բառերով,

3. 5-րդ մասի «Կամավոր կուտակային կենսաթոշակային» բառերը փոխարինել «կամավոր կենսաթոշակային» բառերով, իսկ «կամավոր կուտակային վճարների» բառերը փոխարինել «կամավոր կենսաթոշակային վճարների» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից: